

ՏԱՐԵԿՍՆ ԵՆԴԵԿԱԳԵՐ  
ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՀՈՎԻԻՒՆ

— — — — —

Սիրելի Անդամներ,  
Աստուծոյ օգնութեամբ ի գլուխ հանեցինք 1965 տարին, որու ընթացքին մեր գործնէութիւնը եղաւ ըստ հետեւեալին.—

ԺԱՄԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ.— Եկեղեցւոյս մէջ, 1965-ին մատուցուած է 45 Ա.Պատարագներ: Մեծ Պահոց 5 կիրակիները կատարած ենք ձաշու ժամերգութիւն, ապա հանդիսաւոր Արեւազալ: Իմ բացակայութեանս ընկալ Ս. Եջմիածին ունեցած ենք 2 այցելու եկեղեցականներ, Հոկտ. 31-ին Տ. Վրթանէս Ա. Քհնյ. Փակագեան եւ Նոյ. 7-ին Տ. Լեւոն Քհնյ. Առաքելեան: Տարւոյ ընթացքին եկեղեցական պաշտամունքներու իրենց բոլորանուէր օժանդակութիւնը բերած են Ա. Սրկ. Խ. Խոսրոօեան եւ Ա. Սրկ. Ա. Գրիգորեան: Իսկ Սրկ. Կ. Աւետիքեան եւ Գասպար Գասպարեան եւս կատարած են խղճի մտօք իրենց յանձնուած պարտականութիւնը:

Պարագ-Դասըս, շարունակած է իր ներդաշնակ երգեցողութիւնները մինչեւ Յունիս 1, 1965 ժրաշան Վարիչ Տիար Եղուարդ Սուրբեանի եւ Սեպտ. 1, 1965 էն սկսեալ յանձն առած է Վարիչի պաշտօնը Տօքթ. Արա Ա. Սրկ. Աւագեան: Տիկն. Լիլիան Գասպարեան շարունակած է անձնուիրաբար կատարել իր օրկանիստի պաշտօնը, աւելցնելով փայլը եկեղեցական երգեցողութեանց:

Ա. Սրկ. Աշոտ Գրիգորեան, այս տարի պատրաստեց Կիրակօրեայ Վրժ. էն վեց պատանիներ որոնք կանոնաւորաբար կը ծառայեն իբր մոմակալներ Ս. Սեղանին: Հոս կուզեմ ըսել շնորհակալութեան խօսք Տիկն. Ա. Պարոյրեանին, որ ինչպէս նախորդիւ, այս տարի եւս կանոնաւոր կերպով պատրաստեց ՄԱՍ-ը:

ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ.— Եկեղ. Տիկնանց Միութիւնը, պատրաստել տըլաւ Մեծ Պահոց եւ պարզ օրերու համար երկու կողմեայ վարագոյր մը -- կարմիր եկ մանիշակագոյն -- որուն այնքան պէտքը ունէինք:

Տէր եւ Տիկին Ե. Թուրմանեան մեր խնդրանքին ընդառաջելով սիրով սքտանձնեցին եկեղեցւոյս ապակիները Սթէյն Կլասի վերածելու եւ մկրտութեան մատուռի կլոր ապակին Ս. Հոգիի խորհրդապատկերով Սթէյն ընելու: Հոս կարժէ յիշել եկեղեցւոյս անձնուէր ճարտարապետ Տիար Միհրան Մեսրոպեանի գործակցութիւնը, գծելով ապակիներու նախագիծը: Թուրմանեաններու այս նըւէրը եղաւ ի յիշատակ իրենց մօր Հնգգ. Տիկն. Հեղինէ Թուրմանեանի:

ՄԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ.— Կատարած եմ 6 մկրտութիւն, 2 ամուսնութիւն, եւ 5 յուղարկաւորութիւն -- մին Պալթիմուրի եւ միւսն ալ Ռիչմընտի մէջ: Կատարած եմ ծխականներու փափաքով 4 տունօրհնէք եւ 7-ը գերեզմանօրհնէք:

ԹԵՄԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ ԵՒ ՃԱՄԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— Մայիս 13-15 մասնակցած եմ Թիլատէլիոյ մէջ գումարուած թեմական պատգամաւորական ժողովին, գործակից ունենալով Տիարք Տ. Գուլումեան եւ Գ. Գասպարեան իբր մեր ծուխի աշխարհական պատգամաւորները: Լէյպրտէյի շաբաթավերջին նիւ Եորքի մէջ մասնակցած եմ Հ. Ե. Ե. Կ. ի տարեկան համագումարին: Հոկտ. 26-էն Նոյ. 13 եղած եմ Ս. Եջմիածին, Ամեն. Հայոց Կթղկս. Վազգէն Ա. ի տասնամեայ գահակալութեան հանդիսութեանց, իբր թեմիս ներկայացուցիչներէն մին: Իբր անդամ թեմական խորհուրդի, ամիսը անգամ մը մասնակցած եմ ժողովներու ի նիւ Եորք:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ.— Վերոյիշեալ ճամբորդութիւններն ու տարեկան արձակուրդս -- այս տարի մէկ շաբաթ -- զիս Ուաշինկթընէն բացակայ պահած են 32 օրեր: Մնացեալ 334 օրերու ընթացքին կատարած եմ 361 այցելութիւններ հետեւեալ գլուխներով. -- Հիւանդներու 79, որոնք տուներէ զատ տրուած են զանազան հիւանդանոցներու. ցաւակցական 11, վարչական կամ կրթական գործերով 21, տունօրհնէք 4, ընկերային եւ ծխական գործերով 246: Այցելութիւններս բոլոր կատարած եմ ինքնաշարժով, որուն խնամքի հոգը սիրայօժար կատարած է Ծխական Խորհուրդիս Ատենապետ Տիար Հայկ Պաստիկեան:

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ.— Զանազան եմ առաքելի պատուէրը գործադրել հնարաւորութեանս սահմանին մէջ հիւրընկալութիւն ընելով արտասահմանէն այցելող ազգայիններու եւ եկեղեցականներու, որոնք զուրկ եղած են փոխադր-

ըռւթեան միջոցներու եւ անտեղեակ քաղաքիս :

ԳՐԱՍԵՂԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔ. -- Կատարած եմ ՇՆՈՐՀԱԼԻ թերթիկի խմբագրութիւնը իբր օգնական ունենալով Տիկին Աշխէն Գրիգորեանը եւ պարբերաբար ալ Տիկնք. Գոհարիկ Անտոնեան, Մէլրի էն Պաստիկեան, Լիլիան Գասպարեան եւ Օր. Մէլրի Պօղոսեանը : Իմ կարելին ի գործ դրած եմ որ թերթիկին բովանդակութիւնը ըլլայ հետաքրքրական եւ մանաւանդ օգտակար ծուխիս բոլոր անդամներուն : Եկեղեցւոյս անդամները պէտք է գիտակցին թէ թերթիկը ծախսալից է եւ իբր այդ ընեն իրենց նիւթական նուիրատութիւնը օժանդակելով ծխական խորհուրդին որ տարիներով այդ բեռը իր ուսերուն է առած : Անձամբ պատրաստած եմ բոլոր թրուռիկները -- Ելայրըրգ -- եւ կատարած նաեւ անոնց առաքումները : Առաջնորդաբանի եւ եկեղեցիներու միջեւ հայերէն թղթակցութիւնները կատարած եմ :

ԴԱՍԱՌՕՍՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԱՍՏԻԱՐԱԿԱԿԱՆ. -- Ներկայ ըլլալով կիրակօրեայ դպրոցի ուսուցիչներուն, ժողովներուն, միշտ խօսած եմ Հայց. Եկեղեցին հետաքրքրող նիւթերու շուրջ : Եկեղեցւոյս սրահին մէջ տեղի ունեցած Տիկնանց Միութեան տարեդարձի, Հ. Ե. Ե. Կ. ի օրուան, ինչպէս նաեւ Մշակոյթի օրուան եւ բոլոր առիթներու ամբողջական կերպով բերած եմ իմ մասնակցութիւնը : Այս բոլորէն զատ դարձեալ կատարած եմ հայկական դպրոցի գործը, զոր վեց տարիներէ ի վեր առանձինն կը կատարեմ : Այս հոկտ. ին ուրախ եմ որ գիշերային դասընթացքներու համար ունեցայ Տիար Սահակ Տէտէեանը եւ նաեւ այս տարի կարելի եղաւ կազմակերպել փոքրերու հայկական դպրոց, Եկղց. Տիկնանց Միութեան գործակցութեամբ : Ամէն շաբաթ առաւօտ 4-8- ժամը 10-12 երեք բաժանումներով կուսենանք հայկական դպրոցը, իբր ուսուցիչ ունենալով ինձմէ զատ, Օր. Մէլրի Պօղոսեան, Աշոտ Ա. Սրկ. Գրիգորեան եւ Գասպար Սրկ. Գասպարեան : Ծնողներ պէտք է գիտակցին հայ դպրոցի կարեւորութեան եւ իրենց զաւակները ամէն շաբաթ բերելով դպրոց, թէ օժանդակած կըլլան իրենց զաւակներուն եւ նաեւ օգնած ուսուցչական կազմին :

ԽՈՐՀՐԳԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ. -- Եկեղեցւոյս հովանիին տակ գործող բոլոր ծրխական կազմակերպութեանց ատենապետներուն կամ տեսուչներուն հետ տեւական կապ պահած եմ հեռախօսով կամ անհատական տեսակցութեամբ : միշտ շնայով թերիները դարմանել, ուղղութիւն տալ, կանոնները յիշեցնել, ղժուարութիւնները հարթել : Այնքան ընդարձակ եւ բազմապահանջ է հովիւի գործի դաշտը ծուխիս մէջ, որ կարելի չէ հաշուար յաշտողութիւն եւ արդիւնաւորութիւն ակնկալել բոլոր երեսներու վրայ : Կրնան պատահիլ տկարացումներ, անհոգութիւններ եւ կը ծագին ղժուարութիւններ : Ասոնց առաջը կարելի է առնել, լաւ գործող նուիրուած եւ պատասխանատուութիւն ունեցող եւ զԱստուած ու Հայ Եկեղեցին սիրող սիրող ու յարգող ծխականներու յարատեւ աշխատանքին : Այս ուղղութեամբ զնահատանքով կը յիշեմ ծխական խորհուրդի ներկայ շրջանի Ատենապետ Տիար Հայկ Պաստիկեանը եւ բոլոր ծխական խորհուրդի անդամները, որոնք հակառակ իրենց բազմազբաղ վիճակին, ժամանակ եւ սիրտ կը յատկացնեն կամաւոր ծառայութեան իրենց ղժուար պաշտօնին լաւագոյնս կատարմանը համար : Այս տարի ծխական խորհուրդի Բ. Ատենապետ Գնդ. Ճօրե Ճըսքալեանի գլխաւորութեամբ գործող անդամարշաւի յանձնախումբը ունեցաւ բացառիկ արդիւնք. իբր այդ մեր սրտագին զնահատանքը իրեն եւ Տիկն. Գոհարիկ Անտոնեանի եւ Օր. Ալիս Հինգլեանի :

Կը մաղթեմ որ 1966 տարին, ըլլայ բոլորիդ առողջ եւ երջանկաբեր եւ բոլորդ ալ մեր հայերու զոհաբերութեան ոգիի գիտակցութեամբ լծուիք Հայց. Եկեղեցւոյ ծառայութեան ընդարձակ դաշտի աշխատանքին :

Մնամ Աղօթարար

Գարեգին Մ. Վրդ. Գազանճեան  
Հոգեւոր Հովիւ Ս. Աստուածածին  
Եկեղեցւոյ Ռաշինկի թրնի